ԱՐՏԱՇԵՍ III-ԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՆՈՐ ԱՐԾԱԹԵ ԴՐԱՄ

ԼԵՎՈՆ ՍԱՐՅԱՆ (ԱՄՆ)

Մինչև մեր օրերը հասած հին հայկական արտեֆակտների շարքում Հայաստանի արքաների արծաթե և բրոնզե դրամներն ամենակարևորներից են։ Դրանք, ինչպես նաև Հայաստանին վերաբերող հռոմեական դրամները, կարող են մեզ օգնել վաղ հայկական արքայատոհմերի լուսաբանման և, երբեմն, պատմական վերակազմության հարցերում[1]։ Միջերկրականի կամ Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում մեկուսի կամ որպես գանձեր հայտնաբերված մի քանի հազար այդպիսի դրամներ պահվում են մասնավոր և թանգարանային հավաքածուներում։

Նկարագրությունը.—*Վերջերս հայկական մի նոր արծաթե դրամ է ի հայտ եկել Նյու Յորքի մասնավոր հավաքածուներից մեկում։ Դրամը կրում է հայկական թագով արքայի դիմապատկեր և* Արտաշեսերես *անունը հիշատակող հունարեն գրություն։ Այն թողարկված է արծաթից, կշիռը՝ 3.590 գ, տրամագիծը՝ 22 մմ (Բկողմի կնիքի տրամագիծը՝ 19.5 մմ), կնիքների հարաբերությունը՝ 12.00։*

Ա կ ո ղ մ.—*Արտաքսերքսես արքայի դիմապատկերը դեպի աջ, պսակով շրջանակված։ Արքան կրում է թեք կողերով հայկական թագ, հինգ սրագագաթ ելուստներով, գագաթի և կողերի երկայնքով երկու զուգահեռ երիզներով՝ մարգարտաշար կամ թանկարժեք քարերով զարդարված։ Թագի կենտրոնում՝ երկու, կողմից ալիքաձև ծաղկանախշով շրջապատված ութաթև աստղ։ Ո՛չ ականջակալը և ո՛չ էլ վզկալը չեն երևում։ Գլխի հետևում պատկերված են երեք ալիքաձև ծոպեր։ Արքան անմորուս է, ականջին կրում է օղ։ Զգեստի ծալքերը պարանոցի մոտ ամրացված են ճարմանդով։*

Բ կ ո ղ մ.—*Սաղավարտակիր անձնավորություն (Աթենա՞սը)՝ վահանով և նիզակն ուսին հենած, դեպի ձախ քայլող։ Նիզակը երկու կողմից սրածայր է։ Զգեստի քղանցքի ծալքերը ոտնաթաթերի մոտ ընդգծված են։ Ներքևից սկսած ժամացույցի սլաքի ուղղությամբ ընթերցվող հունարեն գրություն՝* ΒΑΞΙΛΕΩΞ ΑΡΤΑΞΕΡΞΕΩ ΘΕΙΟΥ։ *Դաշտում, վահանից աջ, հունարեն ΙΔ տառերը (հավանաբար նշանակում են 14 թվականը). ոտքերի տակ բաղադրյալ մենագիր (ըստ երևույթին խորհրդանշում է Արտաշատ քաղաքի փողերանոցը)։*

Դրամը հատված է լայն հատաձույլի վրա և, ուստի, քիչ ավելի բարակ է, քան Արտաշեսյաններին բնորոշները։ Պատրաստման տեխնիկական հատկանիշներով դրամն ընդհանուր առմամբ բավական լավն է, բայց իր տիպով այնքան էլ նման չէ մեզ հայտնի որևէ վավերական դրամի։

Մեր մատչելի այս միակ նմուշը խնամքով ուսումնասիրվել է, որոշելու համար նրա վավերականությունը։ Պարզվել է, որ դրամը հատվել է ուշ հելլենիստական դրախմայի կամ հռոմեական դենարի համար հավաստի կշիռ ունեցող հատաձույլի վրա՝ փորագրված կնիքներով[2]։ Դրամի եզրերին երևում են երեք բարակ ճեղքվածքներ, որոնք մատնանշում են, որ այն հատված

---

1 *Տե՛ս* P. Z. Bedoukian. Coinage of the Artaxiads of Armenia. London, 1978; P. Z. Bedoukian. Coinage of the Armenian Kingdoms of Sophene and Commagene. Los Angeles, 1985; P. Z. Bedoukian. Roman Coins and Medallions Relating to Armenia. Vienna, 1971.

2 P. Z. Bedoukian. Coinage of the Artaxiads..., p. 76. *Այստեղ տրված են Արտավազդ IV Օգոստոսի (մ. թ. 4—6 թթ.) հայտնի չորս արծաթե դրամների կշիռները՝ 3.53, 3.70, 3.54 և 3.50 գ (միջինը=3.57 գ)։*

է, այլ ոչ թե ձուլված (կեղծ և հորինված դրամները սովորաբար պատրաստված են լինում ձուլման եղանակով)։ Դրամի երկու կողմերը ենթարկվել են մարման, սակայն ձուլման որևէ վկայություն չի նշմարվում։ Արժե նշել, որ բայառությամբ Տիգրան Մեծի դրամների[3], Արտաշեսյան թողարկումների կեղծումները հավատալով են այն պարզ պատճառով, որ այդ արքայատոհմի դրամներն անծանոթ են կեղծարարներին[4]։

Քիմիական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրամը հատված է մետաղից։ Մետաղի մակերեսի քիմիական բաղադրությունը որոշվել է X-ճառագայթների էներգիա տարածող սպեկտրալուսաչափական դետեկտորով հագեցված չքայքայող էլեկտրոնային տեսածրիչ մանրադիտակի օգնությամբ (SEM-EDS)[5]։ Չափումները կատարվել են երեք միկրոսկոպիկ տեղանքներում՝ առանց մակերեսի նախապատրաստական մշակման. Ակողմի դաշտում՝ արքայի քթի դիմաց, Բկողմում՝ գինյալի սաղավարտից վեր և դրամի վերին մասի եզրին։ Ներքևի աղյուսակում ներկայացված վերլուծության արդյունքներն արտացոլում են դրամի երեք տեղանքների չափումների միջինը՝ + —1 ստանդարտ շեղումով։

Արտաքսերքսեսի դրախմայի մակերեսի քիմիական բաղադրությունը

Տոկոսային հարաբերությունն ըստ կշռի	
Արծաթ	92.53 +/—1.17
Պղինձ	4.08 +/—0.41
Ոսկի	0.61 +/—0.53
Կապար	1.56 +/—0.85
Սիլիկոն	0.67 +/—0.70
Այումին	0.50 +/—0.16
Երկաթ	0.01+/—0.01
Տիտան	0.04 +/—0.07

[3] Y. T. Nercessian. Armenian Coins and Their Values. Los Angeles, 1995, p. 178—182. Թվարկված են Տիգրան Մեծի մի շարք կեղծ դրամները։

[4] L. A. Saryan. Of Forgeries and Fantasies: Two Controversial Armenian Coins.— Armenian Numismatic Journal, vol. 13, 1987, № 1, p. 2—6; V. Matiossian Who was Zariadres? Some notes on an Artaxiad coin.—Armenian Numismatic Journal, vol. 21, 1995, № 1, p. 17—19.

[5] SEM-EDS վերլուծությունը կատարվել է մետաղագործ Ռորերտ Ֆ. Դրագենի սիրալիր աջակցությամբ։ Հետազոտությունը նկարագրված է՝ L. A. Saryan, R. F. Dragen· A Microchemical Investigation of Suspected Plating on Thirteenth-Century Armenian Silver Trams.— Armenian Numismatic Journal, vol. 20, 1994, № 3, p. 53—61.

Պարունակության մեջ կապարի և ոսկու ներկայությունը՝ յուրաքանչյուրը շուրջ 1 տոկոսի չափով, վկայում է, որ դրամը հատվել է հին մետաղից (այդ բաղադրիչները պետք է որ բացակայեին ժամանակակից զտված արծաթից շինված նոր պատրաստվածքներում)։ Դրամի մակերեսին սիլիկոնի, ալյումինի և տիտանի ներկայությունը, հավանաբար, հողի հետ շփման ճանապարհով աննշան կոնտամինացիայի (աղտոտման) հետևանք է։ Մետաղական խառնուրդի բաղադրությունը մակերեսին և նրա ներսում կարող է զանազան պատճառներով տարբերվել, բայց այս դեպքում, եթե կա որևէ տարբերություն, ապա այն, հավանաբար, աննշան է։

Պատմական և դրամագիտական ակնարկ.—Հին հայկական դրամների մեծ մասը թողարկվել է մ. թ. ա. 189 թ. Արտաշես I-ի հիմնած արքայատոհմի թագավորների կողմից։ Իր գրեթե երկու հարյուրամյա գոյության ընթացքում Արտաշեսյան արքայատոհմը հասավ անօրինակ փառքի։ Տիգրան Մեծի օրոք (95—56 մ. թ. ա.) Հայաստանը կարճ ժամանակով դարձավ աշխարհակալություն և Տիգրանն ընդունեց «արքայից արքա» տիտղոսը, որը հաճախ հանդիպում ենք նրա արծաթե և բրոնզե դրամների վրա։ Մ. թ. ա. 69 թ., Լուկուլլոսի արշավանքի նախօրյակին, Տիգրանի հսկողության ներքո եղած տարածքներն ընդգրկում էին Կովկասյան լեռներից և Կասպից ծովից մինչև Միջերկրականի ափերը՝ այժմյան Լիբանան և Իսրայել։

Հին Հայաստանի դրամագիտական տվյալները շարունակում են հարստանալ դրամների նորահայտ տարբերակներով և տիպերով։ Ոչ շատ վաղուց՝ 1959 թ., Փարաքարում հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվեց Արտավազդ II-ի (56—34 մ. թ. ա.) տետրադրախմայի առաջին նմուշը[6]։ Դրանից հետո հայտնաբերվել են Արտավազդի ևս երկու արծաթե տետրադրախմաներ (տարբեր կնիքներով թողարկված)[7]։

Հայաստանի հին դրամները ներկայացնում են հայ արքաների կողմից կրող, հստակորեն պատկերված ինքնատիպ խույր։ Սիրիայի, Եգիպտոսի, Պոնտոսի և Կապադովկիայի արքաները՝ մ. թ. ա. I դարում Հայաստանի արևմտյան հարևանները, իրենց դրամների վրա պատկերվում էին միայն ապարոշով։ Հակառակ դրան, Հայաստանի և Պարթևաստանի արքաներն աչքի են ընկնում իրենց բնորոշ թագով։ Արտաշեսյանների արծաթե և բրոնզե դրամների վրա արքան պատկերված է հայկական խույր կոչվող խնամքով մշակված և գրավիչ տեսք ունեցող թագով։ Խույրը սովորաբար գագաթին ունի հինգ ելուստներ, գլանաձև իրան, ապարոշ՝ գլխի հետևում կապված, ժապավեններով կամ ծոպերով, թագի եզրերը զարդարված են մարգարիտներով կամ թանկարժեք քարերով, իսկ կենտրոնում պատկերված է աստղ[8]։

Հայկական թագը լավագույնս ներկայացված է Տիգրան Մեծի տետրադրախմաների վրա։ Խույրի կենտրոնում պատկերված է ութթև աստղ[9], որի աջ և ձախ կողմերում կանգնած են երկու արծիվներ՝ թիկունքով դեպի աստղը, բայց գլուխները դեպի այն շրջած։ Աչքի են ընկնում խույրի ականջակալը և վզկալը. Արտավազդ II-ի տետրադրախմաների վրա ականջակալը ծալված է ապարոշի տակ՝ տեսանելի թողնելով աջ ականջը և նրանից կախված օղը։ Կենտրոնի ութթև աստղը պահպանված է, բայց արծիվները փոխարինված են ալիքաձև գծերով։ Այդ տարբերից մի քանիսը բացակայում են ուշ Արտաշեսյան արքաների դրամների վրա, բայց աստղը միշտ առկա է[10]։ Հայկական խույ-

---

6 Խ. Ա. Մուշեղյան. Արտավազդ II-ի չորեքդրամյանը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1964, 2, էջ 317—323։

7 Y. T. Nercessian. Armenian Coins..., pl. 10, 45.

8 Y. T. Nercessian. The Evolution of the Armenian Tiara.—Armenian Numismatic Journal, vol. 11, 1985, № 1, p. 2—12.

9 Բացառություն է կազմում Տիգրան II-ի հազվագյուտ տետրադրախման, որի վրա խույրի աստղն ունի ոչ թե ութ, այլ վեց թև։ Տե՛ս L. A Saryan. Three Unreported Tetradrachms of Tigranes the Great.—Armenian Numismatic Journal, vol. 18, 1992, № 2, p. 37-38.

10 Տե՛ս, օրինակ, Credit Suisse, Auction 4: Important Ancient and Medieval Coins

ները, որոշ փոփոխություններով, կարելի է տեսնել նաև այդ ժամանակի Հայաստանյան իրադարձություններն ակնարկող հռոմեական առանձին դրամների[11], ինչպես նաև կոմմագենյան որոշ դրամների վրա՝ այն դեպքերում, երբ արքան ունեցել է հայկական ծագում[12]։ Հայկական խույրն այնքան ինքնատիպ է, որ որտեղ էլ այն հանդիպի, կարելի է վստահորեն կռահել, որ տվյալ դրամն ինչ-որ կերպ կապվում է հին Հայաստանի հետ։

Այստեղ հրատարակված նոր դրամի խույրի ձևավորումը նշանակալիորեն տարբերվում է Տիգրան Մեծի հանրահայտ դրամների հայտնի խույրերից։ Մասնավորապես, բացակայում են զույգ արծիվները, ականջակալը և վզկալը։ Խույրն ավելի կոնաձև է, քան Տիգրան II-ինը։ Խույրեր, որոնց վրա զույգ արծիվները փոխարինված են ալիքաձև բուսական զարդանախշով, կարելի է տեսնել միայն Արտավազդի հազվագյուտ տետրադրախմաների վրա։ Այս առումով Արտաքսերքսեսի խույրն ավելի շատ նմանվում է ուշ Արտաշեսյան դրամների վրա պատկերված խույրերին[13]։

Մեծ հետաքրքրություն է առաջացնում այս դրամի գրությունը։ Զարմանալի է Արտաքսերքսես թագավորին հիշատակող հունարեն գրության առկայությունը, քանի որ Արտաշեսյան արքայատոհմին պատկանող այդ անունով որևէ արքա մեզ հայտնի չէ։ Արքայի Արտաքսերքսես անունը (օգտագործված որպես Արտաքսիասի հունարեն համարժեքը) ճիշտ է հունարեն գրությամբ դրամի համար։ Արտաքսիասը և Արտաքսերքսեսը հավանաբար արքայի անվան համարժեք թարգմանություններն են համապատասխանաբար լատիներեն և հունարեն լեզուներով։ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում նշված է, որ Արտաշատ քաղաքը հունարեն աղբյուրներում երբեմն կոչվել է «Արտաքսերքսոքտիստե»[14]։

Հետաքրքրական է նաև, որ այս դրամի գրությունն ակնարկում է Արտաքսերքսեսի աստվածային բնույթը՝ օգտագործելով հունարեն ΘΕΙΟΥ բառը։ Խ. Մուշեղյանը տալիս է հարցի սպառիչ վերլուծություն[15] և եզրակացնում, որ այս արտասովոր տիտղոսաձևը Հայաստանի կամ հարակից երկրների նույն ժամանակի դրամների վրա չի հանդիպում, բացառությամբ Արտավազդ II-ի տետրադրախմայի։ Շրջանաձև գրության կիրառումը ևս արժանի է ուշադրության, քանի որ այն հազվադեպ է հանդիպում Արտաշեսյան դրամների վրա և հայտ է գալիս միայն Արտավազդ IV /Օգոստոսի (մ. թ. 4—6 թթ.) և Տիգրան VI Էրատոյի (մ. թ. 6 թ.) ժամանակներում[16]։

Including an Armenian and Judaean Collectipn, Bern (December 1985), p. 105. Այս աճուրդից հայտնի երկու լավ պահպանված դրամները թույլ են տալիս որոշ դատողություններ անել ուշ Արտաշեսյան արքաների խույրի վերաբերյալ։ № 667-ը Տիգրան III-ի (մ. թ. ա. 20—8 թթ.) 5.33 գ կշռով բրոնզե դրամ է, որի վրա արքան պատկերված է բարձր, թեք կողեր ունեցող խույրով, որի առնվազն մեկ կողմը զարդարված է մարգարիտներով կամ թանկարժեք քարերով, իսկ կենտրոնում տեղադրված է տասաթև աստղ՝ առանց արծիվների կամ բուսական զարդանախշերի (տե՛ս նաև P. Z. Bedoukian. An Unpublished Coin of Tigranes III (20—8 B. C.—Armenian Numismatic Journal, vol. 13, 1987, № 2, p. 12—13): № 668-ը Տիգրան IV-ի (մ. թ. ա. 8—5 թթ.) 4.83 գ կշռով բրոնզե դրամ է, որի վրա պատկերված թավ մորուքով արքան կրում է ականջակալ ունեցող ավելի գլանաձև տեսքի խույր։ Վերջինիս եզրերը զարդարված են մարգարիտներով կամ թանկարժեք քարերով, ունի հստակ տեսանելի կենտրոնական ութաթև աստղ՝ առանց արծիվների կամ բուսական զարդանախշի։

11 P. Z. Bedoukian. Roman Coins..., № 5, 6, 11—18 դրամները։

12 Y. T. Nercessian. Armenian Coins.... № 229—231, 236, 244 դրամները։

13 Տե՛ս ծան. 10։

14 Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. 1, Երևան, 1986, էջ 493, 501։ Քաղաքի այս անվանումը, հավանաբար, հազվադեպ է օգտագործվել։

15 Խ. Ա. Մուշեղյան. նշվ. աշխ., էջ 320—321։

16 P. Z. Bedoukian. Coinage of the Artaxiads..., № 163—167 դրամները։ Y. T. Nercessian. Armenian Coins..., № 180—184 դրամները։

Այս դրամի լրիվ գնահատականի համար շատ կարևոր է նաև նրա վրա պատկերված մենագիրը։ Անձնավորության ոտքերի տակ տեղադրված բաղադրյալ մենագիրը ճշտորեն համապատասխանում է առաջին անգամ շուրջ 191[illegible] թ. հրատարակված, Արտաշատին վերագրվող չափազանց հազվագյուտ բրոնզե դրամների մենագրին[17]։ Այն տրոհելով, կարելի է կարդալ որպես դրամը թողարկած քաղաքի՝ Արտաշատի անունը։ Հունարեն A, P և T տառերի տարրերը պարզորեն տեսանելի են։

Բկողմի դաշտում, անձնավորությունից դեպի աջ երևացող երկու տառերը կարելի է ընթերցել որպես 14 թվանշան։ Այն կարող է նշանակել արքայի կառավարման տարեթիվը, որի ընթացքում թողարկվել է դրամը։

Դրամի Բկողմում առկա որոշ պատկերագրական տարրեր, ինչպիսիք են նիզակը և սաղավարտը, հայտնի են նույն ժամանակի հռոմեա-հայկական դրամներից։ Այդուհանդերձ, երկու կողմից սուր այս նիզակի վերին ծայրը տարօրինակ տեսք ունի և կարծես վերափոխված է. նույնպես և անձնավորության դեմքը, որը բավական անբնական է թվում։ Այս անկանոնությունները կարող են լինել ավելի ուշ աղավաղումների կամ փորագրիչի վարպետության պակասի հետևանք։

Մինչ այժմ պաշտոնական պեղումների ընթացքում նման դրամներ չեն հայտնաբերվել։ Այսպիսի դրամի հայտնաբերման տրամաբանական վայրը հին Արտաշատն է։ Երկար տարիներ Արտաշատում կատարվել են հնագիտական պեղումներ և հետազոտություններ, բայց մինչ օրս պեղվել է հին հայկական մայրաքաղաքի տարածքի միայն շուրջ 10 տոկոսը[18]։ Արտաշատում արձանագրվել են մի շարք կարևոր դրամագիտական գյուտեր, ներառյալ Տիգրան Մեծի արծաթե դրախմաների գանձը[19]։ Ուստի կարելի է հուսալ, որ ապագա պեղումները կբացահայտեն նոր դրամագիտական գանձեր։

Դրամի վերագրումը Արտաշես III-ին.—Ոճական առումով, այս դրամը վերաբերում է մ. թ ա. I դարի վերջին կամ մ. թ. I դարի սկզբին, այսինքն՝ Հայաստանում Արտաշեսյան արքայատոհմի անկումից մինչև Արշակունյաց արքայատոհմի իշխանության գալու ժամանակահատվածին։ Պետք է ենթադրել, որ այն կարող է պատկանել կա՛մ Արտաշես I-ին (189—160 մ. թ. ա.), կա՛մ Արտաշես II-ին (30—20 մ. թ. ա.) և կա՛մ Արտաշես III-ին (18—34 մ. թ.)։

Արտաշես I-ը, արքայատոհմի հիմնադիրը, առասպելական քաջությամբ և զորությամբ օժտված արքա էր։ Չնայած Մովսես Խորենացու վկայությանը, թե Արտաշեսը դրամներ է թողարկել իր պատկերով[20], մինչև հիմա չկան դրամներ, որոնք կարելի լինի վստահորեն վերագրել նրան։ Սահմանաքարերի վրա հանդիպող Արտաշես I-ի արձանագրություններն արամերեն են, և ոչ հունարեն[21]։ Հավանական չի թվում, թե այս դրամը կարելի է վերագրել Արտաշես I-ին։

---

17 P. Z. Bedoukian. Roman Coins..., էջ 191—194։ Հետևելով ֆրանսիացի անվանի դրամագետ Էռնստ Բաբելոնի ենթադրությանը, այս դրամները ավանդաբար վերագրվել են Կոմմոդոսի իշխանության տարիներին (մ. թ. II դ. վերջ)։ Վերջերս կատարված ուսում նասիրություններն այս դրամները տեղադրում են ավելի վաղ. տե՛ս M. L. Chaumont. A propos d'une ere d'Artaxata, Capitale de la Grande Armenie.—Revue des Etudes Armeniennes, vol. 18, 1984, p. 397—409. և Р. Е. Варданян. К вопросу о датировке двух групп армянских монет эллинистической эпохи.— «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 2, էջ 195—207։

18 Այս տեղեկության համար ես պարտական եմ պրոֆ. Գրիգոր Արեշյանին։

19 Խ. Ա. Մուշեղյան. Արտաշատի հայկական գանձը.—Armenian Numismatic Journal, vol. 4, 1980, p. 105—124.

20 Movses Khorenats'i. History of the Armenians, translated by R. W. Thomson, Cambridge, 1978, p. 147. Արտաշես I-ի գործունեությունը քննարկված է՝ Հայկական սովետական հանրագիտարան. հ. 2, Երևան, 1976, էջ 139։ Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Երևան, 1971, էջ 521—551 և հտ.։

21 Արտաշես I-ի սահմանաքարերի մասին տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, էջ

Արտաշես II-ը (30—20 մ. թ. ա.) Արտավազդ II-ի միակ որդին էր, որը փրկվեց գերեվարությունից. նա ապաստան գտավ Պարթևաստանում և ապա թագավոր կարգվեց հայ ավագանու կողմից։ Որպես Հռոմի երդվյալ թշնամի, նա իր եռանդի մեծ մասը նվիրեց Հայաստանը կրկին ռազմական հենակետ դարձնել ցանկացող Հռոմի ջանքերին դիմադրավելուն[22]։ Քննարկվող դրամի որոշ տարեր, մասնավորապես խույրի զարդարանքը և արքայի աստվածային լինությունն ակնարկող գրության ձևը, կարող են նշանակել, որ դրամը թողարկված է Արտավազդ II-ի հաջորդների կողմից։ Այնուամենայնիվ, Արտաշես II-ին վերագրվող արծաթե դրամներ հայտնի չեն, իսկ նրա բրոնզե դրամները չափազանց հազվագյուտ են և կարելի է անգամ ավելացնել՝ վիճելի[23]։ Չկան բավարար չափով տվյալներ այդ ժամանակվա մասին, որպեսզի հնարավոր լինի համեմատել քննության առարկա դրամն այս արքայի հայտնի դրամների հետ։

Փաստերի գերակշռությունը հուշում է խնդրո առարկա դրամը Հայաստանում մ. թ. 18—34 թթ. իշխած Արտաշես III-ին (Զենոնին) վերագրելու հնարավորությունը[24]։ Արտաշես III-ի գահակալման տարիներն ընկնում են Արտաշեսյանների անկման (մ. թ. 6 թ.) և Հայաստանում Արշակունիների իշխանության գալու (մ. թ. 53 թ.) ժամանակահատվածի մեջ, որի ընթացքում Հայաստանում իշխում էին իրար հաջորդաբար փոխարինող օտար կառավարողները։

Մ. թ. 18 թ. ականավոր զորավար և հմուտ դիվանագետ Գերմանիկոսը Հռոմից ուղարկվում է Հայաստան՝ լուծելու համար հայկական գահի ժառանգորդության հարցը։ Գերմանիկոսն արդեն Հռոմին էր միացրել Կապադովկիան, Կոմմագենեն և այլ փոքր թագավորություններ ու ցանկանում էր պահպանել Հայաստանի չեզոք կարգավիճակը։ Գերմանիկոսը և Հռոմը շահագրգռված էին ընտրել այնպիսի մի թեկնածուի, որն ընդունելի լիներ ժողովրդի կողմից և, միևնույն ժամանակ, չառաջացներ պարթևների թշնամական վերաբերմունքը։ Գերմանիկոսի ընտրությունը կանգ առավ Զենոնի՝ Պոնտոսի արքա Պոլեմոնի և Պյութոդորիսի որդու վրա, որի թեկնածությունը հայերի կողմից հավանության արժանացավ, քանի որ Զենոնը մեծացել էր իրենց միջավայրում և ընդունել տեղական սովորույթները։ Գերմանիկոսը Զենոնին մեծ հանդիսավորությամբ թագադրեց Արտաշատ քաղաքում, նրան վերանվանելով Արտաշես (III)՝ բարձրացնելու համար նրա հեղինակությունը որպես մեծն Արտաշես I-ի գահի ժառանգորդ[25]։ Արտաշեսն իշխեց խաղաղությամբ մինչև իր բնական մահը (34 թ.)։

Հ. Պտուկյանը գրում է, որ Արտաշես III-ը, որը թագավորել է 16 տարի, պետք է որ թողած լիներ բազմաթիվ դրամներ։ Սակայն, մեզ հայտնի են միայն Գերմանիկոսի կողմից Արտաշեսի թագադրումը հիշատակող եզակի պատկերատիպով մի քանի շատ հազվագյուտ արծաթե դրախմաներ և դիդրախմաներ։ Որոշ հետազոտողներ կարծում են, որ այս դրամները թողարկվել են Հայաստանում և ժամանակակից են այդ իրադարձությանը, մյուսները

527—528 և Movses Khorenats'i. History of the Armenians, translated by R. W. Thomson. Cambridge. 1978, p. 198—199.

22 Արտաշես II-ի պատմությունը տրված է՝ Հայկական սովետական հանրագիտարան. հ. 2, էջ 139—140 և Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, էջ 626—631։

23 Արտաշես II-ի դրամների մասին տե՛ս Y. T. Nercessian. Armenian Coins..., p. 77.

24 Արտաշես III-ի պատմությունը տրված է՝ P. Z. Bedoukian. Roman Coins..., p. 24—29. Տե՛ս նաև Հայկական սովետական հանրագիտարան. հ. 3, Երևան, 1977, էջ 686 և Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, էջ 712—713։

25 Ըստ հռոմեացի հեղինակ Տակիտոսի, Զենոնը վերանվանվել է Արտաշես, որովհետև թագադրվել է Արտաշատում։ Հ. Պտուկյանը (P. Z. Bedoukian. Roman Coins..., p. 24—25) այս երկրորդ բացատրությունը պակաս հավանական է համարում։

պնդում են, թե դրանք թողարկվել են ավելի ուշ, Կապադովկիայում[26]։ Դրամները կրում են լատիներեն գրություններ և պատկանում են Արտաշեսի գլխին բարձր թագ դնող Գերմանիկոսին[27]։ Գերմանիկոսի ձեռքին կա նիզակ, իսկ դրախմայի վրա (բայց ոչ՝ դիդրախմայի) թվում է, թե կրում է նաև սաղավարտ։ Քանի որ Արտաշեսը ձգտում էր Արտաշեսյան արքայատոհմի հեղինակության և փառքի վերականգնմանը, ապա պարզ է, որ նա պետք է Արտաշեսյան թագ կրեր։ Սրանք են այս նոր դրամի և հայտնի թողարկումների միջև առկա նմանությունների ընդհանուր եզրերը[28]։

Հոդվածում նկարագրված դրամը փորձել ենք վերագրել Արտաշես III-ին։ Այն կարող է թողարկված լինել Արտաշեսի գահակալման տասնչորսերորդ տարում (մ. թ. 32 թ.), Արտաշատի փողերանոցում։ Հուսանք, որ նոր նմուշների հայտնաբերումը հնագիտական վստահելի ենթատեքստում մեզ հնարավորություն կտա հաստատելու այս ենթադրությունը։

НОВАЯ СЕРЕБРЯНАЯ МОНЕТА, ПРИПИСЫВАЕМАЯ АРТАШЕСУ III

ЛЕВОН САРЬЯН (США)

Резюме

В статье рассматривается новая армянская монета, обнаруженная недавно в одной из частных коллекций Нью-Йорка. На первой стороне—изображение царя в армянской короне. На второй стороне изображена фигура в шлеме, со щитом и копьями на плече, шагающая влево. Она окаймлена греческой надписью с упоминанием имени Артаксеркс. Монета отлита из серебра, весом 3590 г. диаметром—22 мм, соотношение печатей—12.00. Монета отчеканена на широком монетном кружке, и следовательно она несколько тоньше, чем монеты, типичные для Арташесидов. Она по своему типу не совсем похожа на какую-либо известную нам подлинную монету. Она отчеканена на имеющем определенный вес и выгравированные печати монетном кружке, предназначенном для позднеэллинистических драхм или римских динар. Химический анализ показывает, что металл монеты древний. Тиара царя существенно отличается от изображаемых на широкоизвестных монетах Тиграна Великого. В частности, отсутствует пара орлов, наушник и ошейник. Она более похожа на тиары, изображенные на позднеарташесидских монетах. Большой интерес представляет легенда монеты, где имя царя упоминается как Артаксеркс, что по всей вероятности, идентично греческому эквиваленту латинского Артаксиарса. В легенде намекается на божественную сущность Ар-

---

26 Զ. Պտուկյանը (P. Z. Bedoukian. Roman Coins..., p. 27—28) համոզիչ փաստարկներ է բերում այն մասին, որ վերոհիշյալ դրամներն ավելի շուտ թողարկվել են Հայաստանում շուրջ մ. թ. 18 թ., այլ ոչ թե Արտաշես III-ի մահից հետո, ինչպես ենթադրել են Մաթինզլին և Սիդենհամը։ Այդ դրամների նկարագրությունը կարելի է գտնել՝ P. Z. Bedoukian. Roman Coins.., p. 25—27 և Y. T. Nercessian. Armenian Coins.., p. 88 տե՛ս նաև H. A. Seab Roman Silver Coins, vol. 2, London, 1979, p. 3—4 և S. W. Stevenson. A Dictionary of Roman Coins, London, 1964, p. 690.

27 Ben L. Damsky. The Stadium Aureus of Septimius Severus—American Journal of Numismatics. vol. 2, 1990, p. 77—105; մասնավորապես էջ 97—98-ում նշում է, որ այս երկու դրամները հանդիսանում են թագադրություն պատկերող առաջին հռոմեական դրամները, և որ՝ ներկայացնելով թագադրության այդ տեսարանը, Գերմանիկոսը ցանկացել է ցուցադրել Հռոմի գերիշխանությունը։

28 Հայաստանն ակնարկող որոշ հռոմեական դրամների վրա պատկերված են նման սաղավարտներ. P. Z. Bedoukian. Roman Coins..., p. 54—56 (դրամներ՝ համար 18—19)։

таксеркса греческим словом, которое встречается только на тетрадрахмах Артавазда II. Под ногами фигуры помещена вязь монограммы, которая в точности соответствует монограммам на редких бронзовых монетах, приписываемых Артэшату. Ее расшифровка дает возможность прочесть название города Арташата, где чеканилась монета. Греческие буквы, просматриваемые на второй стороне монеты, можно прочитать как число 14. Это, вероятно, год правления царя, при котором была выпущена монета. До сих пор при официальных раскопках подобные монеты не были обнаружены. Стилистически эта монета относится к концу I в. до н. э. или началу I в. н. э., то есть, к периоду от падения династии Арташесидов до прихода к власти династии Аршакидов. Обилие фактов допускает возможность отнести исследуемую монету к Арташесу III (Зенону), правившему в Армении в 18—34 гг. I в. Она могла быть отлита в 32 г. на монетном дворе Арташата.